ՓԱՅՏԱՄՇԱԿՈՒՄԸ ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԻ ԴԱՐՈՒՄ

ՎԱՐՇԱՄ ԱՎԵՏՅԱՆ

Սևանի ավազանի միջին բրոնզեդարյան մշակույթի բազմազանության և տնտեսական կյանքի տարբեր բնագավառների զարգացման մակարդակի ակնառու վկայություններ են ատաղձագործական առարկաների ու փայտե զանազան կառույցների (բնակարանների ու դամբարանների ծածկերի) մնացորդների հայտնագործությունները։ Դրանք հանդիպում են գրեթե բոլոր հուշարձաններում։ Առավել ցայտուն օրինակներ են ամբողջական ձևով կամ որոշ մասերի բացակայությամբ մեկ հասած փայտե սայլերը, որոնց դերն ու նշանակությունն այն ժամանակվա պայմաններում չափազանց կարևոր է եղել ինչպես տնտեսական կյանքում, այնպես էլ ռազմական գործողությունների և թաղման ծիսակատարությունների ժամանակ։

Առայժմ հնագույն փայտե սայլը հայտնաբերվել է Լճաշենի դամբարանադաշտի երկրորդ տեղամասի № 136 դամբարանից[1]։

Դամբարանն ունեցել է միջին մեծության քարերով պատրաստված բուրգ, որի բարձրությունը պեղելու պահին դետնի մակերեսից եղել է 1մ, իսկ տրամագիծը՝ 8,5։ Դամբարանափոսի երկարությունը հասել է 5,2, լայնությունը՝ 2,2, իսկ խորությունը՝ 2,5 մետրի։ Այն ծածկված է եղել 9 մեծ (0,8—1, 0,25—0,75, 1—2,15 մ չափերի) քարերով։ Ուղղվածությունը՝ արևելք—արևմուտք։

Դամբարանում սայլի հետ հայտնաբերվել է սև փայլաներկով խեցեղեն, նուրբ և հավասար հաստության պատերով։ Դրանք պատրաստվել են բրուտագործական դուրգի վրա, զարդարված են սպիտակ ներկով լցված կետաշար, կիսակոր, վերից վար իջնող գծերով[2]։

Հայտնաբերված սայլը երկանիվ է։ Անիվներից յուրաքանչյուրը պատրաստված է երեք մեծ և մեկ փոքր կտոր տաշած գերաններից։ Անիվների թմբուկները սոնու անցքի տեղում ուռուցիկ են՝ սկավառակաձև։ Սոնին անշարժ միացվել է թափքի տակ։ Սայլի հետ գտնվել է երկու առեղ, որոնք անմշակ փայտից են։ Սրանց վրա փայտե շիպերով ամրացված տախտակներով առաջացել է թափքը։ Սայլի հետ լուծ չի գտնվել[3] (նկ. 1)։

Առեղներից աջ և ձախ՝ լծի տեղում, լծկան կենդանիների փոխարեն թաղվել է երկուական մարդ, որոնք, հավանաբար, եղել են ննջեցյալի սպասավորները (ստրուկները)՝ և ննջեցյալին սայլի վրա դրած քաշելով հասցրել են դամբարան և թաղման ծիսակատարության ժամանակ սպանվել ու թաղվել են քաշող անասուններին պատկանելիք տեղում։ Այդ եզրակացությունն արվում է այն փաստի հիման վրա, որ դրանցից մեկի գանդի հակատամասում նկատվել են սուր գործիքի հարվածի հետքեր[4]։

Հ. Մնացականյանը դամբարանի նյութերը ժամանակագրել է մ.թ.ա. XIX—XVIII դարերով[5], որին մենք համակարծիք ենք։

---

1 Հ. Հ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Լճաշենի նյութական մշակույթի զարգացման հիմնական էտապները.—ՊԲՀ, № 2, 1965, էջ 102—103։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 114, աղ. 4, նկ. 2։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում։



Նկ.1



Նկ.2



Նկ.3



Նկ.4

Արտաքին տեսքով այս դամբարանը նման է Սևան քաղաքի գիշերօթիկ դպրոցից ոչ հեռու, 1968 թ. մեր կողմից պեղված № 2 գետնափոսային դամբարանին, որի 12 մ տրամագծով բուրգը գոյացել էր մոտ 200 մ³ քարակույտից։ Այստեղից հայտնաբերվեց հասարակ կառուցվածքով երկանիվ փայտե սայլի հնագույն նմուշներից մեկը՝ դունաղարդ խեցեղենի հարյուրավոր բեկորներով հանդերձ[6]։

Հետաքրքիրն այն է, որ այս դամբարանում մարդու կմախք չկար։ Սայլի հետ հայտնաբերվեց երկու ոչխարի և մեկ շան դանդ, խեցեղենը պարզապես ջարդած էր և փռված դամբարանի հատակին։

Դամբարանափոսը ձվաձև էր ու մեծ չափերի. երկարությունը՝ 6, լայնությունը՝ 5, խորությունը՝ 2,5 մ։ Հավանաբար, դամբարանը սկզբնապես ծածկված է եղել գերաններով, տակն ունենալով հենասյուներ. այն փակված էր մեծ քարերով, որոնք ավելի փոքրածավալ քարերի հետ (բուրգի լիցքի) թափված էին դամբարանափոսի մեջ, այնպես որ պարզ չդարձավ՝ դամբարանափոսը արդյոք կողոպտվա՞ծ էր, թե սա հետևանք էր թաղման անսովոր ծիսակարգի։

Սայլի մասերից անհամեմատ լավ էին պահպանվել կոպտատաշ առեղները, որոնք ունեին 3,5 մ երկարություն, սակայն խիստ խմորված լինելու պատճառով բացելուց հետո փշրվեցին։ Թափքի տեղում կային հաստ տախտակների քայքայված մնացորդներ։ Հնարավոր չեղավ պարզելու նաև անիվների կառուցվածքը, որոնք մեր կարծիքով պետք է լինեին սկավառակաձև, որպիսիք բնորոշ են այդ ժամանակաշրջանի Սևանի ավազանից հայտնաբերված սայլերին։ Սրանում նույնպես լուծը բացակայում էր։

Նկատի ունենալով դունազարդ խեցեղենը և դամբարանի կառուցվածքը, հայտնաբերված սայլը ժամանակագրում ենք մ.թ.ա. XIX—XVIII դարերով։

Ինչպես Լճաշենի № 136, այնպես էլ Սևան քաղաքի № 2 դամբարանից հայտնաբերված սայլերը ընդհանուր ձևով նման են միմյանց և թվագրվում են նույն ժամանակաշրջանով։

Երկու դեպքում էլ, ինչպես նշվեց, սայլերը լուծ չունեն և հիշեցնում են Պազիրիկյան դամբարաններից հայտնաբերված հասարակ կառուցվածքով փայտե սայլերը[7], թեև Պազիրիկյան դամբարանները վերաբերում են սկյութական շրջանին։

Նման կառուցվածքի սայլեր են գտնվել Լճաշենի ուշ բրոնզեդարյան դամբարաններից, որոնց մասին հանգամանորեն կխոսվի։ Սայլերի այդ ձևերը Հայաստանում գործածության մեջ են եղել մինչև մեր ժամանակները և հայտնի են «քոռ սայլեր» անունով։ Այդ կառուցվածքի սայլեր հայտնի են վաղ դինաստիական շրջանին պատկանող դամբարաններից, որոնք ունեցել են սկավառակաձև անիվներ, պատրաստվել են փայտի երեք տարբեր կտորներից և իրար միացվել փայտե շիպերով[8]։ Ինչ վերաբերում է Սևան քաղաքի № 2 դամբարանի թաղման ծեսին, ապա այն դիակիզմամբ թաղում է։ Նման ձևի թաղման ժամանակ, Գ. Կլարկի կարծիքով, ննջեցյալը դիակառքի վրա թաղման վայրն է տարվել դիակիզված վիճակում։ Որպես օրինակ նա մատնացույց է անում Էդենբուրգում (Հունգարիա) գտնված խեցու վրա պատկերված քառանիվ դիակառքին դրված աճյունասափորը[9]։

Աճյունասափորով թաղումներ են հայտնի Հալշտատյան մշակույթում։ Այսպես, Լա-Կոտ-Սենտ-Անդրեից (Հարավային Ֆրանսիա) գտնված աճյունասափոր դրվել է քառանիվ սայլի թափքին[10]։

---

6 Տե՛ս մեր անտիպ նյութերը։

7 С. И. Руденко. Культура населения Горного Алтая в скифское время. М.—Л., 1953, с. 229—231, рис. 143, 145.

8 Г. Чайлд. Древнейший Восток в свете новых раскопок. М., 1956, с. 228—229.

9 Г. Кларк. Доисторическая Европа. М., 1953, с. 392—303.

10 Там же, с. 303, рис. 169.

Ընդհանրապես, դիակառք-սայլերով թաղումները վերաբերել են ազդեցիկ մարդկանց՝ ցեղային առաջնորդներին կամ թագավորներին։

Այս առումով հռչակավոր են Ուրի պեղումների ժամանակ հայտնաբերված «արքայական» սայլերը, որոնք քառանիվ են և վերաբերում են մ.թ.ա.XVI—XV դարերին[11]։ Այնպես որ, Սևանի № 2 դամբարանի թաղման ձևը բացառություն չէ, ընդհակառակը, ժամանակաշրջանի բնորոշ հատկանիշներից է և, ինչ խոսք, պատկանել է հասարակության մեջ բարձր դիրք զբաղեցնող դեմքերից մեկին։ Ինչ մնում է դամբարանի նյութերին (ջարդված և հատակին ցրիվ տրված խեցեղեն), ապա դա կապված պետք է լինի այլ ծիսակարգի, գուցե և դամբարանը թալանված ու ավերված լինելու հետ։

Հնագույն սայլերի կապակցությամբ անդրադառնանք մի կարևոր հարցի ևս։ Որոշ հետազոտողներ գտնում են, թե սայլերի նշված տեսակները Եվրոպա են թափանցել Արևմտյան Ասիայից՝ Հարավային Ռուսաստանի վրայով[12]։ Ընդ որում, նրանք հիմք են ընդունում Հյուսիսային Իտալիայում (Անկոնի մոտ) գտնված սկավառակաձև փայտե անիվները, որոնք բաղկացած են երեք մասից և իրար են միացված հատուկ փայտիկներով[13], այսինքն, ճիշտ այնպես, ինչպես Լճաշենից և Սևան քաղաքի № 2 դամբարանից հայտնաբերված փայտե սայլերի սկավառակաձև անիվները։ Այդ կարծիքի հաստատման համար նշում են, որ Հյուսիսային Իտալիայից ավելի վաղ՝ մ.թ.ա. III հազարամյակից, անվավոր սայլեր են գործածել Մերձսևծովյան տափաստաններում ապրող ցեղերը[14]։ Հետևապես, նրանք գտնում են, որ սայլերն այս միջանկյալ օղակից են ներթափանցել Եվրոպա։

Հնարովի այս տեսության հորինողներն անհասկանալի պատճառով անտեսում են հնագույն ժամանակներից (թերևս մ.թ.ա. IV հազարամյակից) անվավոր սայլերի օգտագործման վերաբերյալ Անդրկովկասի, այդ թվում Հայկական լեռնաշխարհի տարբեր հնավայրերից հայտնաբերված իրեղեն փաստերն ու պատկերները։ Մինչդեռ, ինչպես կտեսնենք, փաստերը բավականին շատ են, խոսուն և բոլորովին հակառակն են ապացուցում։

Այսպես. սկավառակաձև անիվներով սայլեր են հայտնաբերվել Թրիալեթիից (Թռեղք), որն անկասկած Հայկական լեռնաշխարհի անբաժանելի մշակութային օջախներից մեկն է։ Թրիալեթիում Բ. Ա. Կուֆտինը քառանիվ սայլ է գտել ճահճուտների մեջ՝ էնեոլիթյան բնակատեղիի դամբարաններից մեկում, մի այլ սայլ էլ՝ վաղ բրոնզի շրջանին պատկանող դամբարանից[15]։ Սա արդեն պատահականություն չէ։ Միևնույն տարածքից IV—III հազարամյակներին վերաբերող սայլերի հայտնաբերումը խոսում է այն մասին, որ դրանք զուտ տեղական, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի մշակույթի արգասիք են։

Այստեղ հարկ է նշել, որ Զ. Բարնեյը Թրիալեթիի մշակույթը, առանց գիտական հիմքի, հակադրում է «Քուռ-արաքսյան» կամ իր ձևակերպմամբ «Արևելանատոլիական» մշակույթին[16]։

Սայլերի հայտնաբերումը լրացնում է քարից պատրաստված սկավառակաձև անվակների հայտնաբերումը։ Այսպես, տուֆ քարից պատրաստված սկավառակաձև անվակներ են հայտնաբերվել Շենգավիթի ու Շրեշ բլուրի[17], Գառ-

---

11 Л. И. Тюменев. Государственное хозяйство Древнего Шумера. М.—Л., 1956. с. 128, табл. 15.

12 Г. Кларк. Указ. соч., с. 301—302.

13 Там же, с. 304, рис. 172.

14 Там же, с. 301.

15 Б. А. Куфтин. Археологические раскопки в Триалети. Тбилиси, 1941, с. 97—98, табл. XXIX, рис. 102—103.

16 C. Burney. Eastern in the Chaleoli thie and Early Bronze, Age As.. v VIII, 1955, p. 175:

17 Ս. Հ. Սարգսյան. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում. Երևան, 1967, էջ 175, նկ. 9։

նիի[18], Լորուտի[19] և այլ վայրերի վաղ բրոնզեդարյան հուշարձաններում, որոնք պահվում են Հայաստանի Պատմության պետական թանգարանում։ Սկավառակաձև անիվներով սայլի կավե մոդել է գտնված Արթիկի շրջանի Հառիճի վաղ բրոնզեդարյան մշակութային շերտից[20]։

Եթե ասածին ավելացնենք նաև Գեղամա[21] և Սյունիքի[22] լեռների ժայռապատկերներում եղած հնագույն սայլերի բազմաթիվ նկարները, ապա պարզ կդառնա, որ երկանիվ և քառանիվ սայլերի առաջացման հայրենիքը պետք է դիտվի Հայկական լեռնաշխարհը։ Հետևաբար, նշված տեսության հորինողներն ու նրանց հետևողները պարտավոր են հաշվի առնել իրական փաստերը և ոչ թե հորինեն նման տեսություններ։ Այդ կեղծ տեսությանը հանգամանորեն անդրադառնալով՝ Է. Վ. Խանզադյանը, իրավացիորեն եզրակացնում է, որ Զ. Բարնեյը, առաջնորդվելով նախօրոք ձևակերպված կոնցեպցիայով, ըստ որի հընդեվրոպացի խեթերը պետք է գային Կովկասի վրայով Կենտրոնական Անատոլիա, նա (Զ. Բարնեյը) աշխատում է Թրիալեթիի դամբարանների նյութերն ու նրանց թվագրությունը կապել Հյուսիսային Կովկասի և Տրիպոլեյի հետ[23]։ Դրա համար Զ. Բարնեյը հիմք է ընդունում Թրիալեթիից հայտնաբերված խեցեղենի և մետաղե իրերի վրա կտրելու եղանակով արված նախշազարդերը, որոնք, ըստ նրա, հյուսիսի տափաստանային գոտու եկվորների կողմից են բերված[24]։ Այդ եկվորներին նա համարում է հնդեվրոպացիներ, որոնց մեջ կային նաև խեթեր[25]։ Եվ քանի որ նման սայլ հայտնաբերվել է նաև Շրեշ բլուրում, նշել է Զ. Բարնեյը, ուստի այդ եկվորները հասել են մինչև Արաքսի միջին հոսանքը[26]։

Ինչպես կտեսնենք, փաստերը հակառակն են ապացուցում։ Կտրելու եղանակով նախշազարդված խեցեղենը, որից զգալի չափով հայտնաբերվել է Թեթրիծդարոյի № 11 և 46 դամբարաններից, ոչ թե հյուսիսի հետ է կապվում, այլ Հայկական լեռնաշխարհի։ Այդ տիպի խեցեղեն է հայտնաբերվել ավելի վաղ մշակութային օջախներ հանդիսացող Կիրովականի, Շենդավիթի, Էլարի[27], Սևանի ավազանի տարբեր հնավայրերից։ Իհարկե, չի բացառվում նաև հյուսիսի որոշ ազդեցություն, սակայն հարկ է ևս մեկ անգամ ընդգծել, որ վաղ և միջին բրոնզի ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհը, այդ թվում նաև Թրիալեթին, մշակութային մի ընդհանրություն են ներկայացրել, ունենալով իրենց տեղական բնորոշ յուրահատկությունը[28]։

Նշված փաստերից բացի կան ևս նյութեր, որոնցով սպառիչ ձևով կարելի է հերքել այդ անհիմն տեսակետը։ Երկանիվ սայլեր են հայտնաբերվել, օրինակ, 1961 թ. Լճաշենի դամբարանադաշտի առաջին տեղամասում պեղված № 97 և 110 դամբարաններից։ № 97 դամբարանը ունեցել է 18 մ տրամագիծ, ծածկը բաղկացած է եղել հաստ գերաններով ներսից 6 հենասյուներ ունեցող կառուցվածքից։ Հենասյուներից չորսը դրվել են դամբարանափոսի անկյուններում, երկուսը՝ կողապատերի կենտրոնական մասերում և իրար կապվել սյուների վրա դրված հատուկ փայտերով։ Փայտածածկ դամբարանի

---

18 Է. Վ. Խանզադյան. Գառնի 4. Երևան, 1966, աղ. 23, նկ. 2—3, աղ. 24։

19 Վ. Ավետյան, անտիպ նյութեր։

20 Т. С. Хачатрян. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 74 рис. 25.

21 Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան. Գեղամա լեռների ժայռապատկերները. Երևան, 1971, նկ. 159։

22 Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան. Սյունիքի ժայռապատկերները. Երևան, 1970, աղ. 11, նկ. 2, աղ. 26, նկ. 1, աղ. 48, նկ. 2, աղ. 62, նկ. 1, աղ. 77, 96, 177 և այլն։

23 Է. Վ. Խանզադյան. Գառնի 4, էջ 119։

24 C. Burney. Op. cit.

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում։

27 Է. Վ. Խանզադյան. Նշվ. աշխ., էջ 120։

28 C. Burney. Op. cit., p. 175).

վրա լցված քարակույտից բուրգ է առաջացել։ Դամբարանն ունեցել է արևելք—արևմուտք ուղղվածություն. նրա երկարությունը հասել է 9, լայնությունը՝ 3,1, խորությունը՝ 2,9 մետրի։ Գերեզմանախուցը պատրաստվել է 9 շար մանր քարերով։

Դամբարանում հայտնաբերվել է խիստ քայքայված անիվներով երկանիվ սայլ (նկ. 2)։ Անիվներից յուրաքանչյուրը պատրաստվել է տաշած գերաններից 5—6 կտոր տախտակներից, իրար միացվել փայտե շիպերով և ստացել սկավառակաձև տեսք, ինչպես վերը նկարագրված № 136 և Սևան քաղաքի № 2 դամբարանի սայլերի անիվները։ Սայլի անիվները սոնու հետ միասին ամրացվել են թափքի կենտրոնական հատվածից ետ. դրանով սայլի ծանրության մոտ 2/4 մասն ընկել է լծկանների վրա։ Առեղները պատրաստվել են կաղնու քառակող տաշած (մշակած) ուղիղ փայտերից, իսկ լուծը՝ ձևավոր։ Առեղներից աջ և ձախ բացվել են լծկան եզների դանդերը։ Դամբարանի վերին շերտից ներս լցված թափոնների մեջ գտնվել են մ.թ.ա. III հազարամյակի խեցեղենի բեկորներ։ Իհարկե, դամբարանը, ինչպես կտեսնենք, ավելի ուշ շրջանի է։

Դամբարանում սայլից բացի հայտնաբերվել են խիստ ուշագրավ նյութեր, որոնց թվում՝ կաշեպատ, ձվածիր տեսքի փայտե վահան՝ քայքայված վիճակում։ Կաշին փայտե վահանին ամրացվել է բրոնզե բևեռաձև գամերով, որոնք հայտնաբերվել են կմախքի մոտ՝ 45—50 սմ² փռվածքով և 20 սմ խորությամբ, խառնված իրար։ Հայտնաբերված փայտե կաշեպատ վահանը թերևս հնագույնն է մեզ հասած վահաններից։ № 97 դամբարանում գետեղված նյութերի մեծամասնությունը հայտնաբերվել է սայլի շրջակայքից կամ նրա վրայից։ Հանգուցյալի թաղումը կատարվել է սայլի վրա՝ կքանիստ վիճակով։

Դամբարանում հայտնաբերվել են 26 կավամաններ, որոնք ունեն միջին բրոնզեդարյան խեցեղենի հատկանշական գծեր։ Սրանց մեծամասնությունը սև փայլաներկով է։ Խեցեղենի մեջ կան կճուճներ, գավաթներ, թասեր, հրաբորբոք բուրանոթներ և զոհարան։ Կճուճներից մեկի իրանը պատված է սպիտակ ու կարմիր դույնի ներկով ծածկված սրածայր եռանկյունիներով, որոնք բնորոշ են միջին բրոնզի դարի խեցեղենին։ Նման զարդամոտիվներ ունեն թասերից երեքը, գավաթներից 7-ը։ Կավամանների մեջ կան նաև շուրթերն ուղիղ կտրած, երկու կողմից ներճկված, շուրթերի տակ գծազարդով պատված քրեդաններ, որպիսիք մեծ տարածում են ունեցել գունազարդ խեցեղենի շրջանում՝ միջին բրոնզի դարի սկզբներում։

Այսպիսով, տեսնում ենք, որ № 97 դամբարանի նյութերի մեծամասնության վրա կան միջին բրոնզեդարյան, հատկապես մ.թ.ա. XVII—XVI դարերին վերաբերող նյութերի բնորոշ հատկանիշներ, ուստի սայլը նույնպես պետք է թվագրել նշված ժամանակաշրջանով։

Երկանիվ փայտե սայլ է գտնվել նաև № 110 դամբարանում (նկ. 3)։ Այս դամբարանը կառուցվածքով միանգամայն նման է № 97 դամբարանին։ Այն ունեցել է 18 մ տրամագծով բուրգ։ Դամբարանափոսի երկարությունը հասել է 8,7 մ, լայնությունը՝ 2,8, խորությունը՝ 2,15։ Ուղղվածությունը՝ արևելք—արևմուտք։ Դամբարանախուցը շարվել է նույն սկզբունքով, ինչ որ № 97 դամբարանը, միայն այն տարբերությամբ, որ այստեղ նկատվել է 6 շար պատ, նախորդի 9-ի փոխարեն։ Դամբարանում թաղվել է մեկ մարդ, սայլի թափքին՝ ձախ կողքին պառկած, ձեռքերն ու ոտքերը կծկած վիճակում։ Ննջեցյալի շուրջը՝ սայլի թափքի վրա և նրանից աջ ու ձախ գտնվել են 12 կավամաններ, որոնք էլ սև գույնի, ունեն սև փայլաներկով արված դայարներ, իրար մեջ հագած եռանկյունիներ, իսկ կճուճներից մեկի վրա շուրջանակի տարված է հատիկավոր զարդագոտի, մի զարդամոտիվ, որը բնորոշ է միջին բրոնզեդարյան կետաշարե զարդամոտիվներով խեցեղենին։ Հատնապես ուշագրավ է փոքր կավամանների մեկը, որը, հավանաբար, անուշահոտ յուղերի կամ սպեղանու անոթ է, վարդագույն է և պատկանում է գունազարդ խեցեղենի շարքին։

Ինչպես տեսնում ենք, № 110 դամբարանի խեցեղենը և նրա վրայի զարդամոտիվների զգալի մասը նույնպես բնորոշ են միջին բրոնզեդարյան նյու-

թերի ձևերին և զարդամոտիվներին, որով էլ թվագրում ենք սայլը. այն, մեր կարծիքով, վերաբերում է մ.թ.ա. XVII դարի վերջի կամ XVI-ի սկզբներին։ Այդ համոզմանն ենք եկել նաև այն որոշակի տվյալներով, որ № 110 դամբարանից հայտնաբերված սայլը կառուցվածքով միանգամայն նման է ավելի վաղ շրջանի՝ մ.թ.ա. XIX—XVIII դարերին վերաբերող Լճաշենի № 136 և Սևվան քաղաքի № 2 դամբարաններից հայտնաբերված սայլերին և վերը նկարագրված № 97 դամբարանից հայտնաբերվածին։

№ 110 դամբարանից գտնված սայլի երկարությունը եղել է 3 մ, լայնությունը՝ 85 սմ, անիվների տրամագիծը՝ 1 մ, սռնու առանցքը՝ 10 սմ։ Լուծը հանման պահին լրիվ քայքայված է եղել, ինչպես և անիվները. այդ պատճառով դրանք միայն լուսանկարվել են ու չափագրվել։ Այս սայլը իր չափերով, կառուցման տեխնիկայով գրեթե համընկնում է № 97 դամբարանի սայլին և ունի պարզունակ ձև։ Մինչդեռ Լճաշենից և Սևանի ավազանի այլ վայրերից հայտնաբերված սայլերն անհամեմատ կատարելագործված են, ունեն բարդ կառուցվածք ու տարբեր ձևեր։

Միջին բրոնզի դարաշրջանի առավել կատարյալ և բարդ կառուցվածքով սայլ է հայտնաբերվել Լճաշենի № 5 դամբարանաբլուրից։ Նշենք միայն, որ այս դամբարանը և՛ կառուցվածքով, և՛ թաղման ծեսով նմանվում է № 97 և 110 դամբարաններին, թերևս միայն այն տարբերությամբ, որ այստեղ նյութերն ավելի բազմազան են։

Դամբարանում հայտնաբերված սայլը երկանիվ է, ունի ցանցապատ, կամարաձև թափք, որը, ինչպես ենթադրվում է, երեսապատվել է գործվածքով կամ կաշիով (նկ. 4)։ Սայլի շրջանակը պատված է հաստ տախտակներով, իսկ ետևի մասը փակվել է 1 մ բարձրությամբ տախտակով։ Թափքն ունի ինքնատիպ կառուցվածք և տարբերվում է նախորդներից։ Սակայն սայլի հիմնակմախքը և անիվները, որոնք սկավառակաձև են և կազմված են երեք հաստ տախտակներից (պատրաստված շիպերով ամրացնելու միջոցով), միանգամայն նման են վերը նկարագրված սայլերի շրջանակին ու անիվներին (նկ. 4)։

Մեր կարծիքով, այս սայլը միջին բրոնզից ուշ բրոնզի անցման շրջանի լավագույն նմուշներից է և դամբարան դրված նյութերով, հատկապես վրձնանախշ ջայլամապատկեր զարդեր ունեցող կճուճով (գունազարդ), եռագույն (սև, սպիտակ, կարմիր) նախշերով, երկու կողմից նեբկված քրեղանով, ինչպես նաև բարձր, կարմիր պարանոցներով, իրանները սպիտակ ներկով պատված կավե ութ արձանիկներով, կարելի է թվագրել մ.թ.ա. XVI—XV դարերով։

Փայտամշակության հետ կապված գործիքներն ու առարկաները, իհարկե, բազմազան են (սղոց, կացին, դուր), որպիսիք գերազանցապես հայտնաբերվում են բնակարաններից։ Այստեղ մենք նշեցինք փայտագործության առավել կարևոր և բարդ կառուցվածքի արգասիքները միայն։

Պեղումների ընթացքում հանդիպում են բնակարանների, դամբարանների ծածկերի կամ այլ կառույցների փայտե մնացորդներ, ձևավորված տախտակներ, աշխատանքային գործիքների և զենքերի կոթառներ, զանազան իրեր ու առարկաներ։ Հասկանալի պատճառով դրանց զգալի մասը փտած կամ փոշիացած վիճակում է հանդիպում և հնարավոր չէ մանրամասները նկարագրել։

Սակայն պատահում են և ամբողջական ձևով ու լավ պահպանվածներ։ Օրինակ, Լճաշենի № 100 դամբարանից հայտնաբերվել են լավ պահպանված, երեք մեծ, տաշտականման փայտե ամաններ, մեկ փոքր դույլ՝ կափարիչով[29], № 5 դամբարանից՝ փայտե քառոտանի մատուցարան և 1 մ երկարությամբ լավ մշակված տախտակ, որը կարող է սայլի մասերից լինել։ Այս բոլորը հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ միջին բրոնզի դարում փայտամշակությունը ձևավորվել էր որպես ինքնուրույն արհեստ և հասել բարձր զարգացման։

Միաժամանակ կարող ենք նշել, որ եղած փաստերն ավելի քան բավարար են հերքելու ամեն տեսակ հորինվածքները և համոզվելու, որ փայտամշակու-

29 Հ. Հ. Մնացականյան. նշվ. աշխ., էջ 197։

թյան ակունքները գալիս են դեռևս պղնձաքարի դարից, որոշակի ձևով նկատելի են նրա զարգացման հաջորդական փուլերը և կարելի է վստահորեն ասել, որ այդ մշակույթի, հատկապես սայլագործության, հայրենիքներից մեկը, եթե ոչ առաջինը, հանդիսանում է Հայկական լեռնաշխարհը։ Ավելին, միջին բրոնզի դարում փայտամշակությունը լեռնաշխարհի ցեղերի մոտ դարձել է տնտեսության կարևորագույն բնագավառներից մեկը. դա հաստատող փաստերը, ինչպես նկատեցինք, բազմաթիվ են հատկապես Սևանի ավազանի հնագիտական նյութերում։

Այսպիսով, փաստացի նյութի տվյալներով պարզվում է, որ Սևանի ավազանի միջին բրոնզեդարյան մշակույթը իբրև Հայկական լեռնաշխարհի համընդհանուր մշակույթի կարևորագույն օղակներից մեկը, սկզբնավորվել և զարգացել է նույն տարածքում ձևավորված վաղ բրոնզեդարյան մշակույթի հիմքի վրա և պայմանավորել է նրա հետագա առաջընթացն ու ծաղկումը։ Զարգացման այս փուլը էթնիկ առանձին խմբերից արդեն իսկ ձևավորված ցեղային խոշոր միությունների միավորման և միասնական պետության առաջացման ժամանակաշրջան էր, երբ կազմավորվում էր միատարր, միալեզու ժողովուրդ՝ հայ ժողովուրդը։

Հայկական լեռնաշխարհում այս կարևոր փոփոխությունների և զարգացման օրինաչափությունների մասին թյուր պատկերացում ունենալով, օտար գիտնականներից ոմանք հորինել են միանգամայն հիմնազուրկ տեսակետներ, որոնց մինչև օրս հետևում են նաև որոշ հայ գիտնականներ. ընդսմին չի ըմբռնվում, որ այդ մոտեցումը ըստ էության տեղիք է տալիս առանձին շահագրգիռ կողմերի «տեսություններին» համար։ Որոշ գիտնականներ այն կարծիքն են հայտնել, թե Միջին Արևելքում մ.թ.ա. III հազարամյակի վերջում և II հազարամյակի սկզբին ծայր առած զանգվածային գաղթերի հետևանքով «Քուռ-արաքսյան մշակույթը» կրող ցեղերը ինչ-ինչ պատճառով լքել են իրենց բնակատեղիները, ուստի և այդ մշակույթի հետագա զարգացումը ընդհատվել է[30]։ Կամ՝ իբր թե «Քուռ-արաքսյան» բազմաթիվ բնակատեղիներում մինչև ուշ բրոնզի ժամանակաշրջանը կյանքի հետքերը բացակայում են[31]։ Ավելին, ոմանք գտնում են, որ «Քուռ-արաքսյան մշակույթի» տարրերը սկսած մ.թ.ա. III հազարամյակից դուրս են մղվում և մասամբ կլանվում առաջավորասիական ցեղերի կողմից[32]։

Նախ նշենք, որ վերջին տասնամյակներում Հայաստանի տարբեր վայրերից հայտնաբերված հնագիտական նյութերի համակողմանի ուսումնասիրության տվյալներով անհերքելիորեն ժխտվում են այդ տեսակետները։ Սակայն ավելորդ չենք համարում, թեկուզ առանց մանրամասն մեկնաբանությունների, նշելու որոշ փաստեր։

Առաջին հերթին ևս մեկ անգամ ընդգծենք, որ «Քուռ-արաքսյան մշակույթ» անվանումը սխալ է։ Տրամաբանական է կոչել Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III հազարամյակի մշակույթ, իսկ այն կրողներին դիտել որպես հայեր։ Այդ համոզմանն ենք հանգել նկատի ունենալով նշված մշակույթի տարածման շրջանը և այնտեղից հայտնաբերված նյութերում բուն հայկական մշակույթի ակունքները վկայող բազմաթիվ տարրերի առկայությունը։

Անդրադառնալով վերոհիշյալ տեսության սնանկությանը, նշենք նաև, որ Հայկական լեռնաշխարհի մինչև օրս հայտնաբերված միջին բրոնզեդարյան և

---

30 Л. Вилли. Материалы трех глав 2-й части I тома истории научного и культурного развития человечества.—Вестник истории материальной культуры. 1957, № 1, с. 101:

31 J. Mellart. The end of the Early Bronze Age in Anatolia and the Aegean American journal of Archaeology. 62, 1958, № 1, p. 910.

32 Г. Меликишвили. Возникновение Хеттского царства и проблема древнейшего поселения Закавказья и Малой Азии.—Вестник древней истории, 1965, № 1 (9), М., с. 25.

ոչ մի հուշարձանում, իսկ դրանց թիվը բավական շատ է, չի նկատվել զուտ օտար մշակույթ կամ մշակութային այնպիսի օջախ, որտեղ գերազանցեր օտար տարրը։ Իհարկե, խոսքը չի վերաբերում փոխանակային կապերի հետևանքով ներմուծված կամ այլ միջոցներով ձեռք բերված նյութերին։

Հարկ է նշել, որ այդ սխալ տեսակետները ժխտող փաստեր կան Հ. Ա. Մարտիրոսյանի ուսումնասիրություններում[33], իսկ հերքելու փորձ է կատարել Է. Վ. Խանզադյանը՝ Գառնիի միջին բրոնզեդարյան նյութերը քննելիս[34]։ Է. Խանզադյանը ապացուցել է, որ Գառնիում, Երևանի Մոխրաբլուրում, Ղարաբաղի Գեոյ-թեփեում, Մեծամորում, Ջրահովիտում, Էլարում, Նախիջևանի Մոխրաբլուրում, որոնք բազմաշերտ հուշարձաններ են, կյանքը մ.թ.ա. III հազարամյակից մինչև ուշ միջնադար չի ընդհատվել[35]։

Թվարկվածներին պիտի ավելացնել Շիրակի դաշտի, Թազաքենդի, Թումանյանի շրջանի Լորուտի և այլ հնավայրերի բազմաշերտ հուշարձանները։

Առավել ցայտուն ապացույց են Սևանի ավազանի հուշարձաններից հայտնաբերված նյութերը, ուր միջին բրոնզեդարյան նյութերի մի զգալի մասի վրա դրոշմված է վաղ բրոնզեդարյան նյութերի կնիքը։ Իրենց նախատիպերն ունեն նաև կառույցները (կիկլոպյան ամրոցները, բնակարանները, դամբարանները), որոնց հետագա զարգացմամբ է պայմանավորված Սևանի ավազանի ուշ բրոնզեդարյան բազմաճյուղ տնտեսության բոլոր բնագավառներն արտացոլող դասական նյութերի առկայության փաստը։

Միաժամանակ պետք է նշել, որ Հայկական լեռնաշխարհի մշակույթը մեկուսի ձևով չի առաջացել, այլ ձևավորվել է բնաշխարհի քաղաքակրթության հետ ունեցած կապերի և փոխներգործությունների հետևանքով, սակայն տեղական հիմքի վրա, որը զարգացման հետագա ժամանակաշրջաններում պահպանեց ուրույն գծեր և դարձավ հայկական մշակույթի առանձնահատկության հիմքը։

Հայկական լեռնաշխարհի միջին բրոնզեդարյան մշակույթի զարգացման աստիճանի մասին մեր պատկերացումները խիստ թերի կլինեին առանց Սևանի ավազանի մշակույթի համակողմանի ուսումնասիրման։ Այս իմաստով առանձին դեպքերում առավել ուշադրության են արժանի երբեմն երկրորդական համարվող հարցերը ևս։ Դրանցով հնարավոր կլինի ավելի հանգամանորեն լուսաբանել ժամանակաշրջանի կարևորագույն փոփոխությունները, համընդհանուր մշակույթի զարգացման շարժընթացը, ցույց տալ, որ միջին բրոնզեդարյան մշակույթի հիմքում ընկած են եղել նույն տարածքում ձևավորված վաղ բրոնզեդարյան ժամանակների ձեռքբերումները և, որ, սկսած մ.թ.ա. III հազարամյակից, Հայկական լեռնաշխարհում, այդ թվում նաև Սևանի ավազանում կյանքի ընդհատում չի եղել, չի եղել նաև զուտ օտար մշակույթի ներթափանցում միգրացիայի հետևանքով։ Ընդհակառակը, եղել է անընդհատ բնակություն և ստեղծված մշակույթն էլ տեղական արտադրանքի արգասիք է։

Միաժամանակ եկել ենք այն համոզման, որ Սևանի մշակույթը մեկուսի ձևով չի զարդացել, այն պայմանավորված է եղել հնաշխարհի երկրների հետ ունեցած փոխկապերով, հանգամանք, որը կարող է հիմք հանդիսանալ կարծելու նաև, որ Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. II հազարամյակի սկզբներից ձևավորված է եղել պետականություն։

Նյութերի համակողմանի քննումից պարզվում է, որ միջին բրոնզի դարում Սևանի ավազանի տեղաբնակների տնտեսությունը եղել է բազմաճյուղ։ Տնտեսության առաջատար և արտադրողական ճյուղերը եղել են անասնապահությունն ու երկրագործությունը, թեև որսորդությունն ու ձկնորսությունը դեռ կարևոր տեղ էին գրավում։ Թերևս անասնապահությունը տնտեսության գլխավոր ճյուղը լիներ։ Հանդես էր եկել ձին, որը որոշակի դեր էր կատարում տընտեսական կյանքի տարբեր բնագավառներում և ռազմի գործում։

33 А. А. Мартиросян. Город Тейшебаини. Ереван, 1961, с. 25—29.

34 Է. Վ. Խանզադյան. Գառնի 4, էջ 117—120։

35 Նույն տեղում։

Մեծ առաջընթաց էր ունեցել խեցեգործությունը, մետաղամշակությունը, փայտամշակությունը, մանածագործությունը, որոնք ձևավորվել էին որպես արհեստներ և դրանց արտադրանքի մի մասը ձեռք էր բերել ապրանքային նշանակություն։

Տնտեսական կյանքի զարգացման հետ միասին վերելք էր ապրել նաև ռազմական գործը։ Կատարելագործվել էին ինչպես պաշտպանական համակառույցները ու վինատեսակները, այնպես էլ հարձակման միջոցները։ Այդ են վկայում կիկլոպյան ամրոցների ընդարձակումն ու հզորացումը, դաշույնների, տեգերի, նետաղեղների ու նետասլաքների նոր տեսակների հանդես գալը։ Այդ ժամանակներում են հանդես եկել և կիրառություն գտել երկանիվ սայլերը, փայտե հիմքով կաշեպատ վահանները, բրոնզե սրերն ու սակրերը։

Այս բոլորով հանդերձ, հարկ է նշել, որ միջին բրոնզի դարում առանձնահատուկ տեղ ու դեր է պատկանել Լճաշենին՝ որպես կարևոր մշակութային օջախի ոչ միայն Սևանի ավազանում, այլև ամբողջ Հայկական լեռնաշխարհում և Անդրկովկասում։

ДЕРЕВООБРАБОТКА В СРЕДНЕМ БРОНЗОВОМ ВЕКЕ В СЕВАНСКОМ БАССЕЙНЕ

ВАРШАМ ***АВЕТЯН***

Резюме

Деревообработка в среднем бронзовом веке в Севанском бассейне была одним из самостоятельных ремесел, что подтверждается обнаруженным при раскопках богатым материалом. Особую важность представляют двухколесные и четырехколесные деревянные повозки с дискообразными колесами, найденные при археологических раскопках на территории г. Севан и известного Лчашенского могильника. Изучение повозок и сопутствующего материала показывает, что их каменные и глиняные аналоги можно проследить в различных памятниках Армении, в частности, в Шенгавите, Шреш-блуре, Гарни, Лоруте, Ариче, а также в Триалети. Аналогичные рисунки можно видеть на нескольких изображениях Гегамских, Варденисских и Сюникских гор. По мнению автора, Армянское нагорье, в том числе Севанский бассейн, являлся древнейшим очагом деревоотделочных работ не только в Закавказье, но и, возможно, во всем тогдашнем цивилизованном мире. Одновременно автор убежден, что захоронения с повозками принадлежат не только военачальникам и племенной знати, но, возможно, и царям.